

# Գերապայծառ Գեորգ Եպս. Խազումեանի Հրաժեշտի Պատարագ

14 Յունուար 2006  
Երուսաղէմ

Սաղինահայ Կաթողիկէ համայնքի նորանշանակ համայնքապետի գահակալական արարողութիւնն էր կայանալու այսօր, բայց եւ այնպէս, նկատի ունենալով անոր բացակայութիւնը երթելէի թէ անձնագրային դժուարութեանց բերումով, Յաւագին Տիրամօր եկեղեցւոյ մայր խորանի վերեւ մատուցուեցաւ հրաժեշտի պատարագը գալիք մօտ օրերու ընթացքին շրջանէս հեռացող մինչեւ ցարդ թեմին ծառայող Գեորգ Եպս. Խազումեանի:



*Պատուոյ հիւրերէն՝ առաջին շարքի ծախին նստածը Լատին Պատրիարք Միշէլ Սապահ նոյն շարքի վրայ նսել կերելի Արիս Եպս. Շիրվանեան*

Յատկանշանական շուքով ընթացք առնող պատարագ - հանդիսութեան պատուոյ հիւրերու շարքը գրաւած էին Երուսաղէմի Լատին պատրիարք Միշէլ Սապահը, Հայոց Պատրիարքութեան ներկայացուցիչ Արիս Եպս. Շիրվանեանը, Ֆրանչիսքան քիստոտը, շարք մը բարձրաստիճան եկեղեցականներ եւ շրջանիս Աւստրիոյ Դեսպան Տիար Քուրդ Յէնկէլը:

Յաւարտ պատարագի, առաջնորդութեամբ Գերապայծառ Խազումեան եպիսկոպոսի, 150ը անց ներկաները ուղղուեցան Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ անմիջապէս կից գտնուող Աւստրիական Յոսպիտը (որը այսօր արմատական նորոգութիւններէ ետք արդիական պանդոկի մը ամէն պայմանները կ'ամբողջացնէ) ուր տեղի հանդիսասրահին մէջ ընթացք տրուեցաւ ընդունելութեան մը, որու ընթացքին խօսք առաւ Աւստրիոյ Դեսպան Տիար Յէնկէլ, որը իր խօսքի մէջ երախտագիտական խօսք յայտնելէ ետք հեռացող Գեորգ Եպս. Խազումեանի, որը ի դէպ կ'ուղարկուէր Կոստանտնուպոլիս յաջորդ պաշտօնավարման, անդրադարձաւ Հայոց Ցեղասպանութեան եւ Պոլիս քաղաքի յատկապէս Հայոց համար ունեցած խառն նշանակութեանց, այսուամենայնիւ յաջողութեան թէ արդիւնաբեր ծառայութեան սրտաբուխ մաղթանքներով դեսպանը աւարտեց իր խօսքը:



*Հրաժեշտի Պատարագի ներկաներէն*

Ղեսպանի խօսքի որպէս պատասխան, Գերապայծառ Խազումեան յուզումնախառն ապրումներով ամբողջացուց իր հրաժեշտի խօսքը եւ վերջապէս ամբողջացուց շրջան մը որը մի գուցէ փնտռենք նկատի առնելով հեռացող Գեորգ Եպս. Խազումեանի եւ մեր, Յ.Մ.Ը.Մ.ի, սերտ յարաբերութիւնները:



*Գեր. Խազումեան իր սրտի խօսքի Պահուն: Նկարի կեդրոնը (բաժակը ձեռքին) ղեսպան Յէնկէլը*



*Յիւրասիրութիւն ի պատիւ գերապայծառին*



*Գեր. Խազումեան Պատարագի ընթացքին արտասանած պատգամը*



*Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Յ.Դ.ի ներկայացուցիչները Գեր. Խազումեանի հետ: Ձախէն աջ՝ եղբ. Ռ. Եգեկէլեան, ընկ. Լ. Օհաննէսեան, Գեր. Խազումեան, եղբ. Յ. Պաղամեան եւ քոյր Ա. Հինտոյեան*